ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ՝ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ N 5 ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 1260-Ա
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (27.11.2013-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	14.11.2013
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	26.11.2013
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	27.11.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2013 թվականի N 1260-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ՝ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ N 5 ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի N 682 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Համայնքներին անավարտ շինարարության օբյեկտներ հանձնելու մասին» N 176-Ա որոշման հավելվածի «Շիրակի մարզ» բաժնի «Անիի տարածաշրջան» ենթաբաժնի «Մարալիկ քաղաք» գլխից հանել «Մոնոլիտ շ. N 17», «Մոնոլիտ շ. N 22», «Մոնոլիտ շ. N 26», «Մոնոլիտ շ. N 27», «Մոնոլիտ շ. N 28» և «Մոնոլիտ շ. N 35» տողերը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի NN 26 և 27 շենքերի շինարարական աշխատանքների ավարտման փաստագրումից հետո մեկամսյա ժամկետում այդ շենքերը որպես սոցիալական բնակարանային ֆոնդ փոխանցել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշվեկշռին՝ դրանց նկատմամբ իրավունքների պետական գրանցումն ապահովելու համար:

3. Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեներով նախատեսված միջոցների հաշվին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում կառուցված NN 17, 22, 28 և 35 բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացմամբ լուծել Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N 5 վթարային շենքի բնակիչների վերաբնակեցման՝ անվտանգ բնակելի տարածությամբ ապահովման, ինչպես նաև Մարալիկ քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի դրույթների համաձայն համայնքի ղեկավարի կողմից 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաստատված՝ բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում հաշվառված անձանց բնակարանային խնդիրները:

4. Սահմանել, որ սույն որոշման 3-րդ կետում նշված շենքերի բնակարանները հատկացվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից ստեղծված բնակարանների բաշխման հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունների հիման վրա բնակարան ստացող անձանց և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կնքված համապատասխան պայմանագրերով՝

1) Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N 5 վթարային շենքի բնակարանների սեփականատերերին՝ շենքում սեփականության (համատեղ սեփականության) իրավունքով պատկանող բնակարանը համայնքին նվիրաբերելու և հետագայում պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ բնակարանային պահանջ չներկայացնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարության առկայության պայմաններում՝

ա. այլ հասցեներում սեփականության (համատեղ սեփականության) իրավունքով բնակարան (բնակելի տուն) չունեցող անձանց՝ իրենց պատկանող բնակարանի (սենյակների թվով) չափին համապատասխան,

բ. այլ հասցեներում սեփականության (համատեղ սեփականության) իրավունքով բնակարան (բնակելի տուն) ունեցող անձանց՝ իրենց պատկանող բնակարանի (սենյակների թվով) չափից մեկ սենյակով պակաս սենյակների թվով բնակարան, իսկ 1-սենյականոց բնակարանի դեպքում՝ 1-սենյականոց բնակարան.

2) Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N 5 վթարային շենքի բնակարանների վարձակալներին՝ որպես սոցիալական վարձակալությամբ բնակարան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 16-րդ կետով սահմանված նորմերի համաձայն.

3) Մարալիկ քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց՝ սեփականության իրավունքով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի դրույթների համաձայն.

4) բնակարանի հատկացման ժամանակ առաջնահերթությունը տրվում է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին, Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N 5 վթարային շենքի բնակարաններում փաստացի բնակվող վարձակալներին, ինչպես նաև շենքում փաստացի բնակվող և այլ հասցեներում սեփականության իրավունքով բնակարան (բնակելի տուն) չունեցող սեփականատերերին.

5) Մարալիկ քաղաքի NN 17, 22, 28 և 35 շենքերի կառուցվածքում բնակարանային պահանջարկի ապահովման համար անհրաժեշտ բնակարանների (սենյակների թվով) բացակայության դեպքում կարող է հատկացվել՝ 3-սենյականոց բնակարան ստանալուն հավակնող ընտանիքներին՝ երկու հատ 1-սենյականոց բնակարան, իսկ 4-սենյականոց բնակարան ստանալուն հավակնող ընտանիքներին՝ մեկ հատ 1-սենյականոց և մեկ հատ 2-սենյականոց կամ երեք հատ 1 սենյականոց բնակարաններ.

6) սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն կնքվող համապատասխան պայմանագրերի նոտարական վավերացման և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են բնակարան ստացող անձանց միջոցների հաշվին:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում՝ սույն որոշման 4-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված անձանց փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքների հիման վրա հաստատել Մարալիկ քաղաքի NN 17, 22, 28 և 35 շենքերից բնակարան ստացող ընտանիքների ցուցակը.

2) Մարալիկ քաղաքի NN 17, 22, 28 և 35 շենքերի շինարարական աշխատանքների ավարտման փաստագրումից հետո մեկամսյա ժամկետում՝ նշված շենքերից բնակարան ստացող անձանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից կնքել՝

ա. Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N 5 վթարային շենքի բնակարանների վարձակալների հետ՝ վարձակալության, իսկ բնակարանների սեփականատերերի հետ՝ պետական աջակցության մասին պայմանագրեր՝ սահմանելով բնակարանների հատկացման ու քանդման ենթակա վթարային շենքի՝ իրենց բնակարանների ազատման հիմնական պայմանները,

բ. երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հետ՝ նվիրատվության (անհատույց մասնավորեցման) մասին պայմանագրեր:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարին՝

1) Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N 5 վթարային շենքի քանդման աշխատանքներն իրականացնել համայնքի միջոցների հաշվին.

2) Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N 5 վթարային շենքի բնակեցումից ազատված բնակարանների, ինչպես նաև ապամոնտաժման աշխատանքների ավարտման մասին տեղեկատվությունը և սահմանված կարգով տրված քանդման թույլտվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ բնակեցումից ազատված բնակարանների նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցման սահմանափակումները կիրառելու և քանդված բնակարանների նկատմամբ նախկինում կատարված իրավունքների պետական գրանցումները դադարեցնելու նպատակով:

7. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին և առաջարկել Մարալիկի քաղաքապետին՝ քանդման ենթակա բնակելի տների բնակեցումից ազատված բնակարաններում չիրականացնել քաղաքացիների կրկնակի բնակեցում և հաշվառում:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2013 թ. նոյեմբերի 26
Երևան

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան